ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 դեկտեմբերի 2025 թվականի N 1828 - Լ

«ԿՈՆԿՈՒՐՍ ՄՈՆԴԻԱԼ ԴԵ ԲՐՅՈՒՍԵԼ 2026» ԳԻՆՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄՏԵՍ-ՄՐՑՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արդյունաբերական քաղաքականության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը և 6-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը, «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 21-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության և «Մոնդիալ դե Բրյուսել» մրցույթի կազմակերպիչ Վինոպրես (Vinopres S.A.) ընկերության միջև 2025 թվականի փետրվարի 1-ին կնքված հուշագիրը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետությունում 2026 թվականին իրականացնել «Կոնկուրս Մոնդիալ դե Բրյուսել 2026» գինու միջազգային համտես-մրցույթի միջոցառումը, որի կազմակերպիչ է հանդիսանում Վինոպրես (Vinopres S.A.) ընկերությունը:

2. Հաստատել «Կոնկուրս Մոնդիալ դե Բրյուսել 2026» գինու միջազգային համտես-մրցույթը Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

3. Սահմանել, որ «Կոնկուրս Մոնդիալ դե Բրյուսել 2026» գինու միջազգային համտես-մրցույթը Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու կազմակերպման աշխատանքների ընդհանուր համակարգումն իրականացվելու է Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) կողմից:

4. Թույլատրել հիմնադրամին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հնգօրյա ժամկետում կնքել համապատասխան պայմանագիր «Կոնկուրս Մոնդիալ դե Բրյուսել 2026» գինու միջազգային համտես-մրցույթի կազմակերպիչ Վինոպրես (Vinopres S.A.) ընկերության հետ՝ հստակ սահմանելով, որ նախապատրաստական աշխատանքները մեկնարկում են պայմանագրի կնքումից անմիջապես հետո:

5. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել առաջարկություն՝ «Կոնկուրս Մոնդիալ դե Բրյուսել 2026» գինու միջազգային համտես-մրցույթը Հայաստանի Հանրապետությունում անցկացնելն ապահովելու նպատակով 2025 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության հատկացումների կազմում նախատեսված 36,000.0 հազար ՀՀ դրամը (ներառյալ ավելացված արժեքի հարկը) հիմնադրամին կանխավճարի տրամադրման կարգով հատկացնելու վերաբերյալ.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել առաջարկություն՝ «Կոնկուրս Մոնդիալ դե Բրյուսել 2026» գինու միջազգային համտես-մրցույթի կազմակերպման համար 4-րդ կետով նախատեսված պայմանագրով ստանձնած պարտավորությունների մարման նպատակով 2026 թվականի համար անհրաժեշտ 684,000.0 հազար ՀՀ դրամի (ներառյալ ավելացված արժեքի հարկը) չափով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության 2026 թվականի պետական բյուջեով հատկացված ֆինանսական միջոցներից վերաբաշխում կատարելու միջոցով հիմնադրամին հատկացնելու վերաբերյալ:

6.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին, արտաքին գործերի նախարարին, առողջապահության նախարարին, ներքին գործերի նախարարին, Պետական եկամուտների կոմիտեի նախագահին և առաջարկել Երևանի քաղաքապետին, յուրաքանչյուրն իր գործառույթների մասով, ապահովել «Կոնկուրս Մոնդիալ դե Բրյուսել 2026» գինու միջազգային համտես-մրցույթը Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու նախապատրաստական և կազմակերպման գործընթացների իրականացումը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

12.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ